Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թ.
նոյեմբերի 15-ի նիստի N 46
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ 2013-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարություն 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 77-Ն որոշման 1-ին հավելվածի 90-րդ կետը, ինչպես նաև մի շարք ռազմավարական, նպատակային ծրագրեր և հայեցակարգեր (Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. դեկտեմբերի 18-ի **«Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին»** N 1745-Ն որոշում, ՀՀ կառավարության 2007 թ. ապրիլի 5-ի **«Հայաստանի Հանրապետության մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին»** N 589-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի **«Գեղարվեստական կրթության հայեցակարգը հաստատելու մասին»** N 47 արձանագրային որոշում և այլն):

2. Ծրագիրը սահմանում է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության դերը պետական կրթամշակութային քաղաքականության մեջ, համակարգի ռազմավարական ուղղությունները, զարգացման միտումները, նպատակներն ու խնդիրները, ներկայացնում գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության բովանդակությունն ու մեթոդաբանությունը:

3. Ծրագիրը նպատակաուղղված է մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության բնագավառում անհատի բազմակողմանի ու մտավոր ներուժի զարգացմանը, հիմքեր է ստեղծում ՀՀ ապագա քաղաքացիների ձևավորմանը նպաստող նպատակային ծրագրերի իրականացման համար:

4. Ծրագիրը հնարավորություն կընձեռի սահմանել ոլորտի իրավական դաշտի կատարելագործման ուղղությունները, միասնական կրթական չափորոշիչների մշակման սկզբունքները, նյութատեխնիկական բազայի բարելավման և արդիականացման ժամանակակից չափանիշները, իրականացնել գեղարվեստական կրթության միասնական ծրագրային և մեթոդական ապահովումը, ապահովել մշակույթի բնագավառի կադրային պահանջարկի համալրման նպաստավոր պայմանների ստեղծումը:

5. Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացությունները.

1) Գեղարվեստական կրթություն՝ գործընթաց, որն ապահովում է անհատի կողմից ազգային և համամարդկային մշակույթի ընկալումն ու յուրացումը, ինչը հանդիսանում է անհատի ձևավորման, հոգևոր, մտավոր, ստեղծագործական անհատականության զարգացման համար կարևորագույն միջոցներից մեկը:

2) Ընդհանուր գեղարվեստական կրթություն՝ գործընթաց, որն ապահովում է մշակույթի և արվեստի ոլորտում մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծում, հանրակրթական դպրոցում ստացած տեսական գիտելիքների գործնականում կիրառում և դրանց փոխադարձ կապի ամրապնդում:

3) Մասնագիտական գեղարվեստական կրթություն՝ գործընթաց է, որն ապահովում է մշակույթի և արվեստի ոլորտներում հասարակության սոցիալական տարբեր խմբերի դաստիարակությունն ու ուսուցումը, և ուղղված է ստեղծագործական գործունեության կազմակերպմանը, անհատ ստեղծագործողների մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը, ոլորտի մասնագետների (այդ թվում՝ կառավարման համակարգ) պատրաստմանն ու համալրմանը, մշակութային որակյալ ծառայությունների մատուցմանը, մշակութային կազմակերպությունների (թատրոններ, գրադարաններ, թանգարաններ, համույթներ և այլն) բնականոն գործունեության ապահովմանը:

4) Գեղագիտական դաստիարակություն՝ գեղեցիկը ընկալելու, զգալու, գնահատելու և գեղագիտական արժեքներ ստեղծելու ստեղծագործական անհատի ձևավորմանը նպատակաուղղված գործընթաց: Այսպիսի սահմանումը վերաբերում է՝ հասուն անհատին, մինչդեռ երեխաները նույնպես ընդունակ են արձագանքելու շրջապատող միջավայրի գեղեցկությանը, բնությանը, երաժշտությանը՝ ձգտելով ստեղծագործել՝ երգել, պարել, նկարել և այլն:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

6. Ծրագրի նպատակներն են.

1) հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման պայմանների ստեղծման շարունակականության ապահովումը.

2) արվեստի և մշակույթի բնագավառներում Հայաստանում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթների պահպանումն ու զարգացումը, համապատասխանեցումը նոր տնտեսական հարաբերություններին, ժամանակակից պահանջներին և միջազգային կրթական չափորոշիչներին.

3) կրթական տարբեր մակարդակների միջև շարունակականության և հաջորդականության ապահովման համար պայմանների ապահովումը.

4) տաղանդավոր երեխաների ու երիտասարդների բացահայտումը, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովումը.

5) մանուկների և պատանիների հաղորդակցում ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի լավագույն նմուշներին, դասական և ժամանակակից արվեստին.

6) արվեստի բարոյական ներուժի իրացում՝ որպես մանուկների և պատանիների բարձրագույն նպատակների, բարոյական սկզբունքների ձևավորման ու զարգացման նախապայման.

7) սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար կրթության մատչելիության ապահովումը.

8) ոլորտում նպատակային պետպատվերի ներդրման համակարգի կատարելագործումը:

III. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ծրագրի իրականացման շրջանակներում ենթակա են լուծման հետևյալ խնդիրները.

1) մանուկների և պատանիների գեղագիտական պահանջմունքների ձևավորումն ու զարգացումը.

2) գեղագիտորեն զարգացած, մշակույթի սպառմանը պատրաստ և շահագրգիռ լսարանի ստեղծումը.

3) անհատի կողմից ազգային և համամարդկային մշակույթի ուսումնասիրումը և ճանաչումը.

4) արվեստի և մշակույթի բնագավառում ստեղծագործողների և մանկավարժական կադրերի առաջնային նախապատրաստման, վերապատրաստման և վերարտակավորման համակարգի ձևավորումը.

5) պետական չափորոշիչների մշակումը, նոր ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմումը և ներդնումը.

IV. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8. Կրթությունը մշակույթի և արվեստի ոլորտում հիմնված է երկու փոխկապակցված համակարգերի վրա՝ ընդհանուր գեղարվեստական կրթություն և մասնագիտական գեղարվեստական կրթություն: Գեղարվեստական զարգացումը, գեղագիտական դաստիարակությունը ՀՀ–ում իրականացվում է վաղ, կրտսեր և ավագ նախադպրոցական տարիքից, որի հիմքում ընկած են գեղարվեստական արժեքներն ընկալելը և դրանց հանդեպ գիտակցական վերաբերմունք դրսևորելը: Այստեղ կարևոր տեղ է հատկացված հատկապես նկարչությանը, պարին, երաժշտությանը, ինչպես նաև գեղագիտական միաջավայրին:

Կրթական ծրագրերում ըստ տարիքային առանձնահատկությունների՝ սահմանված են գեղարվեստական դաստիարակության և մշակութային կրթության խնդիրները՝ երեխաների երաժշտություն ունկնդրելու, վոկալ, երաժշտառիթմիկ կարողությունների, պարերի, երաժշտական խաղերի, երգ-պարերի ուսուցման նպատակով:

9. Ընդհանուր գեղարվեստական կրթության համակարգը

Ընդհանուր գեղարվեստական կրթության համակարգում ուսումնական ծրագրերն իրականացնում են նախադպրոցական (մանկապարտեզներ) և հանրակրթական ուսումնական (տարրական, հիմնական, ավագ, միջնակարգ դպրոցներ, վարժարաններ) հաստատությունները: Մանկապարտեզներում գեղագիտական դաստիարակությունն ուղղված է գեղեցիկի և շրջապատող իրականության գեղագիտական ընկալմանն ու ստեղծագործական ունակությունների ձևավորմանը: Հանրակրթական դպրոցներում գեղարվեստական կրթության հիմնական խնդիրներն ուղղված են աշակերտների գեղագիտական դաստիարակությանը, ճաշակի, բնության, պատմական և մշակութային հուշարձանների նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը, հոգևոր և բարոյական որակների զարգացմանը:

***1)* Նախադպրոցական հաստատություններ**

ա. Առկա իրավիճակը

2011-2012 ուստարում (աղբյուրը՝ ԿԳՆ և ՀՀ մարզպետարաններ) ՀՀ-ում գործել են **633** համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատություններ **63830** երեխաների համակազմով: Կրթահամալիրների կազմում և գերատեսչական ենթակայությամբ գործել է **5** մանկապարտեզ՝ **551** երեխայի համակազմով, ոչ պետական՝ **50** հաստատություն՝ **1850** երեխայի ընդգրկմամբ:

«Կրթության որակ և համապատասխանություն» կրթության մատչելիության ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերում, հանրակրթական ուսումնական հաստատությունների բազայի վրա նախադպրոցական կրթության այլընտրանքային միկրոծրագրեր են իրականացվում **125** հաստատություններում, իսկ 2012 թ. սեպտեմբերից կգործարկվեն ևս **74** ծրագիր:

Նախադպրոցական տարիքում գլխավոր դերը պատկանում է շրջապատող աշխարհի հանդեպ գեղագիտական վերաբերմունքի ձևավորմանը:

Գործնականում մանկապարտեզներում երեխաների համար («Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված՝ կրթական ծրագրով պարապմունքների բաշխման ժամանակացույց և օրվա կանոնակարգ) կազմակերպվում են շարժական խաղեր, երգեցողություն, պարերի ուսուցում, նկարչության դասեր, հեքիաթասացություն, արտասանություն: Պարբերաբար անցկացվող պարապմունքները հնարավորություն են ընձեռում հստակ պատկերացում կազմելու երեխայի հիշողության, երաժշտական լսողության և ռիթմի զգացողության մասին և ճիշտ ուղղորդելու նրա կարողությունների զարգացումը:

Նախադպրոցական հաստատություններում ուսումնական ծրագրերն (*շարժական խաղեր, երգեցողություն, պարերի ուսուցում, նկարչության դասեր, հեքիաթասացություն, արտասանություն*) իրականացնում են դաստիարակը, երաժշտական ղեկավարը և պարուսույց խմբավարը, ինչպես նաև մատուցվում են լրացուցիչ վճարովի կրթական ծառայություններ ըստ նախասիրությունների՝ պար, երգեցողություն, նկարչություն, ապլիկացիա, դիզայն:

բ. Հիմնական խնդիրները

Նախադպրոցական հաստատություններում գեղագիտական դաստիարակության խնդիրները հիմնականում լուծված են, սակայն բացակայում են ուսուցման ուղղությունների համապատասխան մասնագիտական ձեռնարկներն ու մեթոդական ուղեցույցները:

գ. Առաջարկվող գործողությունները

Տարիքային տարբեր խմբերի համար երգի, պարի, նկարչության ուսումնամեթոդական ժամանակակից ձեռնարկների մշակում և հրատարակում:

2) Հանրակրթական ուսումնական հաստատություններ

ա. Առկա իրավիճակը

2011-2012 թթ. ՀՀ-ում գործել է **1441** հանրակրթական դպրոց (պետական և ոչ պետական), որից՝ **13**-ը տարրական, **495**-ը հիմնական, **118**-ը՝ ավագ, **797**-ը՝ միջնակարգ, **18**-ը՝ վարժարան, որտեղ սովորել է **386439** աշակերտ, այդ թվում՝ տարրական դպրոցում՝ **570** աշակերտ, հիմնական դպրոցում՝ **154289**, ավագ դպրոցում՝ **56651**, վարժարաններում՝ **4774**, միջնակարգ դպրոցում՝ **170155**, դասավանդել է **41757** մանկավարժ:

Տարրական դասարաններում դրվում է այն հիմքը, որի վրա ձևավորվում է գեղագիտական իմացության համակարգը, ձեռք են բերվում նախնական գիտելիքներ, կառուցվում են անհատի գեղարվեստական-գործնական ունակությունները:

Միջնակարգ դպրոցում դեռահասները տիրապետում են արվեստի տարբեր ճյուղերի լեզվին, որը հնարավորություն է տալիս նրանց ինքնուրույն ըմբռնել արվեստի գործերը, ինչպես նաև ստեղծում է նախադրյալներ ինքնուրույն ստեղծագործելու համար:

Տարրական և միջնակարգ դպրոցների 1-7-րդ դասարաններում հիմնական ուսումնական պլանի **«Արվեստ»** մասնագիտության բնագավառում պարտադիր ուսուցումը բաղկացած է *3 բաղադրիչներից՝* **«Կերպարվեստ», «Երաժշտություն» ու «Տեխնոլոգիա»** (դասավանդումը իրականացվում է համապատասխան դասագրքերով) և կազմում է **456** ժամ: **«Կերպարվեստ»** առարկայի դասավանդումը իրականացվում է **4 հիմնական ուղղությամբ՝** *գծանկար, գունանկար, դեկորատիվ կիրառական գործունեություն, կերպարվեստի պատմություն ու տեսություն*: **«Երաժշտություն»** առարկայի դասավանդվումը իրականացվում է **4 հետևյալ ուղղությամբ՝** *երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, իմպրովիզացիա*: **«Տեխնոլոգիա»** առարկայի դասավանդումը իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝ *աշխատանք բնական և արհեստական նյութերով, թղթով ու ստվարաթղթով,*

մանածագործական նյութերով, գրաֆիկա, խոհարարություն, հագուստի պատրաստման տեխնոլոգիա, նյութերի գեղարվեստական մշակում, դիզայն:

Հիմնական և ավագ դպրոցներում ուսումնական պլանի պարտադիր դասավանդվող առարկայացանկերում բացակայում են մշակույթի և արվեստի առարկաները: Միևնույն ժամանակ, դպրոցական տնօրինման բաղադրիչի կարգով, երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի մեջ մտնում են **«Մշակույթի պատմություն», «Արվեստի պատմություն», «Բարոյագիտություն», «Բանահյուսություն», «Գեղագիտություն», «Հնագիտություն», «Ազգագրություն»** առարկաները:

Հանրակրթական դպրոցներում գործում են նաև նկարիչների և դիզայներների, լուսանկարիչների, արվեստի պատմության, խեցեգործության, գոբելենի, թատերական գործունեության, պարի մասնագիտական ստեղծագործական արտադասարանական խմբակներ:

բ. Հիմնական խնդիրները

Ավագ դպրոցի ուսումնական պլանում բացակայում են մշակույթի և արվեստի առարկաները:

Երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի «Մշակույթի պատմություն», «Արվեստի պատմություն», «Բարոյագիտություն», «Բանահյուսություն», «Գեղագիտություն», «Հնագիտություն», «Ազգագրություն» առարկաների համար մշակված չեն առարկայական ծրագրեր:

գ. Առաջարկվող գործողությունները

Հանրակրթական դպրոցի դասավանդվող առարկաների շարքում «Ազգային պարարվեստ» առարկայի ներդնում (շաբաթական 1 օր, 1 դասաժամ՝ 2-9–րդ դասարանների համար):

Ավագ դպրոցի ուսումնական պլանում «Համաշխարհային մշակույթի պատմություն» առարկայի տեսական և պրակտիկ առարկայական ծրագրերի մշակում և ներդնում:

Հանրակրթական դպրոցում «Մշակույթի պատմություն», «Արվեստի պատմություն», «Բարոյագիտություն», «Բանահյուսություն», «Գեղագիտություն», «Հնագիտություն», «Ազգագրություն» առարկաների առարկայական ծրագրերի մշակում և հաստատում:

Պետական պատվերի շրջանակներում դպրոցական ծրագրում ընդգրկված հայ դասականների ստեղծագործությունների հրատարակում՝ «Դպրոցականի գրադարան» խորագրի ներքո:

10. Մասնագիտական գեղարվեստական կրթության համակարգ

Մասնագիտական գեղարվեստական կրթության համակարգում ուսումնական ծրագրերն իրականացնում են երաժշտական, գեղարվեստի, արվեստի և պարարվեստի դպրոցները, արվեստի նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական (ուսումնարաններ, քոլեջներ) և բուհական հաստատությունները:

ՀՀ-ում մասնագիտական գեղարվեստական կրթությունը եռաստիճան է՝ նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն: Մասնագիտական կրթության եռաստիճան համակարգում մեծ դեր են խաղում տարիքային առանձնահատկությունները: Ներկայում հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտների շուրջ 7 տոկոսը միաժամանակ հաճախում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներ:

Մասնագիտական գեղարվեստական կրթության համակարգի արդիականացման հիմնական ուղղությունները նպատակաուղղված են ուսուցման պայմանների բարելավմանը, ուսուցման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ստեղծագործական ուսումնական հաստատությունների սովորողների ստեղծագործական կարողությունների և մասնագիտական ինքնադրսևորման համար արդյունավետ միջավայրի ստեղծմանը:

11. Մասնագիտական գեղարվեստական կրթական հաստատություններ

1) ***Առկա իրավիճակը***

2010-2011 թթ. ՀՀ-ում գործել են **204** մասնագիտական գեղարվեստական կրթական հաստատություններ, այդ թվում՝ **101** երաժշտական, **76** արվեստի, **25** գեղարվեստի, **2** պարարվեստի դպրոց, ընդհանուր **27900** աշակերտով:

Մասնագիտական գեղարվեստական կրթական հաստատությունների հիմնական նպատակն է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության կրթական ծրագրերի իրականացմամբ մշակույթի ոլորտի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար դիմորդների պատրաստումը:

ՀՀ-ում երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցներում դասավանդվում են հետևյալ առարկաները՝ **դաշնամուր, ազգային, լարային, փողային նվագարաններ, հարվածային գործիքներ, կերպարվեստ, դեկորատիվ կիրառական արվեստ, քանդակագործություն, գրաֆիկա, երգեցողություն, պարարվեստ, թատրոն, դիզայն**:

Մինչ 2007 թ. գեղարվեստական կրթական համակարգում սոցիալ–տնտեսական իրավիճակի հետ կապված, շնորհալի շատ երեխաներ դուրս էին մնում մշակութային կրթական համակարգից: Արդյունքում՝ դիմորդներ չլինելու պատճառով որոշ մասնագիտություններ չէին ուսուցանվում, ինչն էլ իր հերթին խնդիրներ էր առաջացնում միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների ընթացքում: Վտանգված էր շատ մասնագիտությունների դասավանդումը (ազգային, փողային, լարային գործիքներ): Ուսուցիչների ցածր աշխատավարձի, ուսման վարձավճարների չհիմնավորված քաղաքականության արդյունքում նվազել էին ուսուցիչների և աշակերտների թվաքանակը, որն էլ իր հերթին բացասաբար էր անդրադառնում շատ մասնագիտությունների (հիմնականում՝ ազգային, լարային, փողային նվագարաններ) դասավանդման որակի և ծավալի վրա: Պետական պատվերի բացակայությունը, ուսման վարձավճարների բարձրացումը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար անմատչելի էր դարձնում ուսուցումը:

Վերոնշյալ խնդիրների լուծման և գեղարվեստական կրթության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման նպատակով ընդունվեց ՀՀ կառավարության 2007 թ. հոկտեմբերի 11-ին **«ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ազ- գային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը հաստատելու մասին»** N 1167-Ն որոշումը:

Ստորև ներկայացվում է «ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշները 2007-2011 թթ.



2008-2011 թթ. ՀՀ մշակույթի նախարարության «**Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում»** և «**Գրականության պետական պատվեր»** ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորմամբ ծրագրերով հրատարակվել է **134 անուն** գրականություն: Ստորև ներկայացվում է հրատարակված գրականությունն ըստ ուղղությունների.



Ծրագրի իրականացման ընթացքում մի շարք դպրոցներում վերաբացվեցին ազգային նվագարանների բաժիններ: Ուսման վարձավճարների փոխհատուցումը ոչ միայն հնարավորություն տվեց ապահովել ուսուցման մատչելիությունը, այլև դպրոցներին լուծելու մի

շարք խնդիրներ՝ նոր գործիքների, ուսումնական գրականության ձեռքբերում, ուսուցիչնե-րի վարձատրություն և այլն:

2) Հիմնական խնդիրները

ա. Կառավարման համակարգ

Ներկայում ՀՀ-ում երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցները հիմնականում գործում են տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ: 2011 թ. բոլոր դպրոցները ստացել են համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) կարգավիճակ:

2002 թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքով մասամբ հստակեցված են մշակույթի ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները: Մասնավորապես՝ վերոնշյալ օրենքի 24-րդ հոդվածում՝ որպես համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություն նշվում է, որ համայնքի ղեկավարը կազմակերպում է համայնքի մշակութային կազմակերպությունների գործունեությունը, մշակութային օբյեկտների շահագործման և նորոգման աշխատանքները: Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակից կախված՝ համայնքների մեծ մասում մշակութային կազմակերպությունների պահպանման համար տրամադրվող միջոցները բավարար չեն:

Կառավարման համակարգում ավելի սերտ համագործակցության անհրաժեշտության կա մշակույթի ու կրթության լիազորված պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, քանի որ գեղարվեստական կրթության շատ հիմնախնդիրների լուծումը կապված է վերոնշյալ մարմինների համատեղ գործողություններից՝ (կախված նրանց լիազորությունների շրջանակից):

բ. Իրավական դաշտ

Հստակեցված չէ ՀՀ-ում երաժշտական, արվեստի և գեղարվեստի, պարարվեստի դպրոցների կրթական կարգավիճակի հարցը և տեղը մասնագիտական կրթության մակարդակներում: Երաժշտական, գեղարվեստի, արվեստի և պարարվեստի դպրոցները փաստացի իրականացնում են մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրեր, որը ամրագրված չէ իրավական ակտերում: «Կրթության մասին» ՀՀ օրենքով դպրոցները դիտվում են որպես միայն արտադպրոցական ուսումնական հաստատություններ:

գ. Կադրային ոլորտ

ՀՀ օրենսդրությամբ երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների կարգավիճակի հստակ չսահմանման արդյունքում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների մանկավարժների աշխատավարձը (25-35 հազ. դրամ) ցածր է հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների աշխատավարձերից:

ՀՀ մարզերում որոշակի մասնագիտությունների գծով բարձրագույն կրթությամբ դասավանդող մանկավարժների պահանջարկ կա, ինչը պայմանավորված է բուհերի շրջանավարտների հեռավոր մարզերում աշխատանքից խուսափելու հանգամանքով:

Դպրոցներում ուսուցման առավել արդյունավետ կազմակերպման նպատակով ներկայում կա հետևյալ նվագարանների ուսուցիչների պահանջարկ՝ լարային նվագարանների մասով՝ *ալտի և թավջութակի, փողային նվագարանների մասով՝ շեփորի, գալարափողի, ֆագոտի, տրոմբոնի և հոբոյի, ազգային նվագարանների մասով՝ թառի, քամանչայի, ուդի, բամբիռի, պկուի, սանթուրի*: Ընդհանուր առմամբ ՀՀ-ում այսօր կա *179 մանկավարժի* անհրաժեշտություն: Կարևորելով «ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցնե-րում ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի հետագա զարգացման ուղիները՝ մոտակա տարիներին մանկավարժների անհրաժեշտություն կառաջանա *կոնտրաբաս, պարկապզուկ, քամանի, բլուլ, սազ* նվագարանների գծով:

Կադրային ապահովման հիմնական խնդիրներից է նաև դպրոցներում դասավանդող մանկավարժների վերապատրաստումը: Հեռավոր, սահմանամերձ, բարձր լեռնային համայնքների մշակութային կենտրոնները կադրերով ապահովելու համար անհրաժեշտ է բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) համակարգում լայնորեն կիրառել նպատակային հասցեական գործուղումների համակարգը:

դ. Նյութատեխնիկական բազայի համալրում և արդիականացում

Գեղարվեստական կրթության մատչելիության և որակի ապահովվածության բարձրացման նպատակով 2008 թ. ՀՀ մարզերում և Երևանում հիմնվեցին **33 հենակետային դպրոց** յուրաքանչյուր մարզում՝ երեքական:

Նյութատեխնիկական բազայի արմատական բարելավման կարիք ունի դպրոցների մեծ մասը, սակայն, կարևորելով ստեղծված երաժշտական, արվեստի և գեղարվեստի հենակետային դպրոցների գործունեությունը, առաջնահերթ է նրանց վերանորոգումը, նյութատեխնիկական բազայի համալրումը և արդիականացումը:

Հենակետային դպրոցներից լավ շենքային պայմաններ ունեն **9**-ը, բավարար պայմաններ՝ **15**-ը, անբավարար՝ **11**-ը (վերջին 10 տարիներին ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից կատարվել է շուրջ **1800.0** մլն. դրամի վերանորոգման աշխատանքներ): Նյութատեխնիկական հագեցվածության լավ պայմաններ ունեն **5**-ը, բավարար՝ **20**-ը, անբավարար՝ **11**-ը: Դպրոցների մեծ մասում բացակայում են լոկալ ջեռուցման համակարգերը:

Համայնքային ենթակայության ուսումնական հաստատությունների մեծ մասը (հատկապես աղետի գոտում և հեռավոր ու սահմանամերձ մարզերում) կարիք ունի շենքային պայմանների բարելավման: Որոշ գյուղական համայնքներում գեղարվեստական կրթություն և գեղագիտական դաստիարակություն իրականացնող հաստատությունները տեղակայված են մշակույթի տներում ու ակումբներում, որոնց մի մասը ներկայում լիարժեք չեն գործում, ունեն հիմնանորոգման կարիք: Համայնքային բյուջեները այսօր էլ մեծ դժվարությամբ են ապահովում պահպանման ծախսերի մի մասը, անբավարար են գույքային պայմանները, գործիքները բարոյապես և ֆիզիկապես մաշված են:

Երաժշտական և արվեստի դպրոցների գործունեության հիմնական խոչընդոտներից է երաժշտական գործիքների պակասը, ինչը հնարավորություն չի տալիս առավել արդյունավետ կազմակերպել ուսման գործընթացը ու պահպանել դասավանդման անհրաժեշտ որակը: Համայնքներում անհրաժեշտ ֆինանսական միջոցների ու վարպետ վերանորոգողների բացակայության պատճառով երկար տարիներ դպրոցները երաժշտական գործիքներով չեն համալրվել և գործիքների վերանորոգում չի իրականացվել (բացառությամբ մի քանի մասնավոր դեպքերի և նվիրատվությունների): Գեղարվեստի և արվեստի դպրոցներն ունեն տարրական նյութերի կարիք (թուղթ, ներկեր և այլն):

ՀՀ երաժշտական, արվեստի դպրոցների սովորողների միայն 15.3 տոկոսն է ապահոված գործիքներով: Ստորև ներկայացվում է դպրոցների երաժշտական գործիքներով հագեցվածությունը:

Մարզ	Դաշնամուր	Ազգային	Լարային	Փողային	Հարվածային	Ընդամենը
Արագածոտն	76	25	3	10	0	114
Արարատ	192	22	12	8	0	234
Արմավիր	251	46	19	61	1	378
Գեղարքունիք	166	36	5	14	0	221
Լոռի	252	133	45	28	2	460

Կոտայք	234	22	36	17	0	309
Շիրակ	198	62	35	27	3	325
Սյունիք	184	14	24	18	0	240
Վայոց ձոր	56	12	1	0	0	69
Տավուշ	98	46	11	4	0	159
Երևան	773	28	248	323	33	1405
Ընդամենը	2480	446	439	510	39	3914



Անհրաժեշտ է մշակել դպրոցները երաժշտական գործիքներով ապահովման և եղածի վերանորոգման նպատակային ծրագիր՝ նախատեսելով *հիմնադրամի* ստեղծում:

Գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն-ներում ներկայում բացակայում են ժամանակակից էլեկտրոնային ինֆորմացիոն միջոցները, այդ թվում՝ նաև համացանցը, որոնք չեն նպաստում ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, միջազգային փորձի ուսումնասիրմանն ու կիրառմանը: Մշակութային կրթական հաստատությունները համակարգչային դասարաններով ապահովման կարիք ունեն:

ե. Ծրագրային ու մեթոդական ապահովում և ուսումնական գործընթացի կատարելագործում

Ծրագրային և մեթոդական ապահովման ուղղությամբ այսօր արդիական է երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները նոր ուսումնական պլաններով, մեթոդական ուղեցույցներով, առարկայական ծրագրերով, մասնագիտական գրականությամբ ապահովման շարունակականությունը: Անհրաժեշտ է նաև ուսուցման գործընթացը համապատասխանեցնել ժամանակակից պահանջներին և ներդնել նոր մեթոդներ ու մասնագիտություններ:

3) Առաջարկվող գործողությունները

ա. Կառավարման համակարգ

«Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների պետական ծրագրի» կառավարման նպատակով միջգերատեսչական խորհրդի ստեղծում:

ՀՀ մշակույթի նախարարությանը կից **մշակույթի ազգային ինստիտուտի** ստեղծում, որի հիմնական գործառույթներն են մշակույթի ոլորտում՝ մասնագետների վերապատրաստումը և վերավորակավուրումը, մշակութաբա-նական, գիտահետազոտական աշխատանքների ու ուսումնասիրությունների իրականացումը, մանկավարժների որակավորման չափորոշիչների մշակումը, մանկավարժների ատեստացիայի իրականացումը, ուսուցման մեթոդիկաների մշակումը, համապատասխան գիտական և մեթոդական գրականության հրատարակումը, գիտահետազոտական աշխատանքների և ուսումնասիրու-թյունների իրականացումը, համապատասխան գիտական և մեթոդական գրականության հրատարակումը մշակույթի ոլորտում ուսուցիչների որակավորման չափորոշիչների մշակումը, ինչպես նաև մշակութային կրթության ոլորտում աշխատող կադրերի որակավորման բարձրացումը և վերապատրաստումը, ատեստացիայի իրականացումը:

բ. Իրավական դաշտ

Անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել «Կրթության մասին» ՀՀ օրենքում՝ սահմանելով գեղարվեստական կրթական համակարգի տեղը և կարգավիճակը:

գ. Կադրային ոլորտ

Մշակույթի ոլորտին առնչվող մանկավարժական կադրերի մոնիտորինգի իրականացում:

Մասնագիտական կրթական հաստատությունների մասնագետների թվաքանակի օպտիմալացում, մասնագիտական կրթության կառուցվածքային վերակազմակերպում:

Գեղարվեստական կրթության համակարգի մանկավարժների սոցիալական վիճակի բարելավում:

դ. Նյութատեխնիկական բազայի համալրում և արդիականացում

Դպրոցներում երաժշտական գործիքների ապահովման նպատակով առաջարկվում է ՀՀ մշակույթի նախարարությանը կից ստեղծել «**Երաժշտական գործիքների շրջանառու հիմնադրամ»:** Հիմնադրամի համալրման աղբյուրներ կարող են հանդիսանալ ՀՀ պետական բյուջեն և այլ միջոցները, Երևանի ու ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցներում պահպանվող ու չօգտագործվող, ՀՀ մշակույթի նախարարության ծրագրերով ստեղծված գործիքները, նվիրաբերվող նվագարանները և այլն: Հիմնադրամի նվագարանները պայմանագրով (1-2 տարի ժամկետով) կտրամադրվեն գործիքների պահանջարկ ունեցող դպրոցներին: Հիմնադրամի համալրմանը մասնակցած դպրոցների և կազմակերպությունների համար կկիրառվեն խրախուսման միջոցներ:

«ՀՀ երաժշտական, արվեստի և գեղարվեստի հենակետային դպրոցների նյութատեխնիկական և մասնագիտական բազայի բարելավում» ծրագրի մշակում:

ե. Ծրագրային ու մեթոդական ապահովում և ուսումնական գործընթացի կատարելագործում

Գեղարվեստական կրթության համակարգի միասնական նոր ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, մեթոդական ուղեցույցների, նոր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, արվեստի մենագրությունների, գեղարվեստական մշակույթի պատմության և տեսության հրատարակման աշխատանքների մշակման շարունակականության ապահովում:

Մշակույթի զարգացման իրավիճակի և շարժընթացի բացահայտման նպատակով կրթական հաստատությունների գործունեության ուսումնասիրում, մոնիթորինգի իրականացում, հասարակության գեղարվեստական կրթության ու սոցիալ-մշակութային և սոցիոլոգիական հետազոտությունների անցկացում:

12. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններ

Նախնական մասնագիտական կրթության նպատակն է հիմնական և միջնակարգ կրթությամբ սովորողներին նախապատրաստել աշխատանքային գործունեության այն

մասնագիտությունների գծով, որոնք պահանջում են նախնական (արհեստագործական) մասնագիտական որակավորում:

1) Առկա իրավիճակը

2011-2012 թթ. ՀՀ-ում գործել է նախնական մասնագիտական ծրագիր իրականացնող **43** ուսումնական հաստատություն, որից **16**-ում դասավանդվել է արվեստի և արհեստների **34** մասնագիտություն (զարդակիրառական արվեստ, գեղարվեստական ձևավորում, դիզայն, լուսանկարչություն, գեղարվեստական հարդարում)՝ **1173** սովորողով: Բացի նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններից՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացվել են նաև **4** կրթահամալիրներում:

2) Հիմնական խնդիրները

Ներկայում նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվող մասնագիտությունների բազմազանությունն ապահովված է, սակայն խնդիր է համարվում ՀՀ մարզերում արվեստի և արհեստների ուսուցման հավասարաչափ բաշխումը (ուսուցումը բացակայում է ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Տավուշի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում):

3) Առաջարկվող գործողությունները

ՀՀ մարզերում արվեստի և արհեստների նախնական մասնագիտական որակավորմամբ կադրերի պատրաստման հավասար պայմանների ստեղծում՝ ելնելով տվյալ մարզում պատմականորեն ձևավորված ավանդական արհեստի և ժողովրդական ստեղծագործության առանձնահատկություններից:

13. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ

1) Առկա իրավիճակը

2011-2012 թթ. ՀՀ-ում գործել է **97** միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որից **12**-ը իրականացնում է գեղարվեստական կրթություն: ՀՀ կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին» N 73-Ն որոշմամբ հաստատված միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվող մասնագիտությունների ցանկում մշակույթի բնագավառի **22** մասնագիտություններից **6**-ը չեն դասավանդվում (***կրկեսային արվեստ***՝ կրկեսի մենակատար (դերասան), ինքնագործ կրկեսային կոլեկտիվի ղեկավար, ***լուսային ռեժիսուրա***՝ տեխնիկ, ***թատերային ձևավորման արվեստ***՝ նկարիչ-տեխնոլոգ, ***մանվածքային և թեթև արդյունաբերության իրերի գեղարվեստական ձևավորում***՝ նկարիչ-տեխնոլոգ, ***մենեջմենթ-մշակույթի ճյուղ***՝ կառավարիչ (մենեջեր):

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում երիտասարդներն անցնում են լիարժեք սոցիալ-մշակութային ինքնահաստատման փուլ՝ գիտակցելով սեփական պատկանելությունը մշակութային որոշակի շերտին: Այն դրսևորվում է յուրահատուկ գեղարվեստա-գեղագիտական պատկերացումներով ու ճաշակով, որոնց հիմքի վրա էլ կառուցվում են գեղարվեստական նախասիրությունները՝ անկախ նրա մասնագիտական և սիրողական բնույթից:

2011-2012 ուսումնական տարում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում **9** մասնագիտական (արդյունաբերություն և շինարարություն, տրանսպորտ և կապ, գյուղատնտեսության, տնտեսագիտություն, իրավագիտություն, առողջապահություն, սպորտ, մանկավարժություն, արվեստ և կինեմատոգրաֆիա) խմբերում ուսանել է **29207** ուսանող, որից արվեստ և կինեմատոգրաֆիա մասնագիտական խմբում **2802** ուսանող (ընդհանուրի 10.0 տոկոս):

2) Հիմնական խնդիրները

ՀՀ աշխատաշուկայի մշակույթի ոլորտում միջին մասնագիտական կրթության որակավորմամբ մասնագետների պահանջարկի ապահովում և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար դիմորդների պատրաստում:

3) Առաջարկվող գործողությունները

ա. ՀՀ աշխատաշուկայում միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի ճշգրտում՝ միջին մասնագիտական կրթության նոր մասնագիտությունների (մասնագիտացումների) պետական կրթական չափորոշիչների մշակում և սահմանված կարգով մասնագիտությունների ցանկում փոփոխության կատարում:

բ. ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում բացակայող մասնագիտությունների ներդնում, մասնավորապես՝ **«Ռեժիսուրա»** մասնագիտության **«Հնչունային ռեժիսուրա» և «Էստրադային ռեժիսուրա»** մասնագիտացումները, **«Արտմենեջմենթ», «Նվագարանների պատրաստում և վերանորոգում»** մասնագիտությունները, **«Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում»** մասնագիտության գծով՝ **մշակութային արժեքների վերականգնողներ՝** ըստ մասնագիտացումների:

V. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գեղագիտական դաստիարակության համակարգը ներառում է ընդհանուր ու մասնագիտական գեղարվեստական կրթություն իրականացնող կրթօջախները, ինչպես նաև ստեղծագործական կենտրոնները, հայորդյաց տները, մշակույթի տները, ակումբները, ստուդիաները, երեխաների հանգիստն ու ազատ ժամանցը կազմակերպող մշակութային հաստատությունները:

14. Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների գործունեություն

1) Առկա իրավիճակը

2010-2011 թթ. ՀՀ-ում գործել են ***40 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ,*** որոնց գործունեության հիմնական նպատակն է երեխաների արտադպրոցական մշակութային, գեղագիտական, հոգևոր կրթության, ֆիզիկական դաստիարակության ապահովումը, ունակությունների և կարողությունների զարգացումը՝ հաշվի առնելով նրանց նախասիրությունները և ***7 հայորդյաց տներ***, որոնցից **4**-ը՝ գործում է Երևանում (*Նոր Նորք, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա և Քանաքեռ-Զեյթուն՝ մանրանկարչության կենտրոն*), իսկ **3**-ը՝ ՀՀ մարզերում (*Էջմիածին, Վանաձոր և Աշտարակ քաղաքներ*), ***մշակույթի տներ և ակումբներ,*** որտեղ հաճախել են ***23500 մանուկներ և պատանիներ***, որոնք ուսանել են դեկորատիվ-կիրառական արվեստների, կերպարվեստի, երգ-երաժշտության, սպորտային, համակարգչային, լրագրության ու օտար լեզուների, թատերական, պարային, կրկեսային և այլ խմբերում:

2) Հիմնական խնդիրները

Ուսումնական ձեռնարկներով ապահովում և մեթոդական արդիականացում:

Շրջապատող միջավայրի նկատմամբ երեխաների գեղագիտական վերաբերմունքի, արվեստի տարբեր (նկարչություն, երգ, պար, բանավոր խոսք և այլն) ոլորտներում գեղարվեստական կարողությունների ձևավորում:

3) Առաջարկվող գործողությունները

Տարիքային տարբեր խմբերի համար երաժշտության, երգի, պարի, կերպարվեստի ժամանակակից ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և մանկավարժների վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների սովորողների համար պետական աջակցության տրամադրում փառատոների, ցուցահանդեսների, ստուգատեսների, մրցույթների կազմակերպման գործում:

VI. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԳՍՏԻ, ԺԱՄԱՆՑԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

15. Երեխաների հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպման հիմնական նպատակն է նպաստել երեխաների և պատանիների գեղագիտական ու հայրենասիրական դաստիարակությանը, բազմակողմանի զարգացմանը:

1) Առկա իրավիճակը

Երեխաների հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպումը իրականացվում է համերգասրահներում, թատրոններում, ցուցասրահներում, պատկերասրահներում, ինչպես նաև գրադարաններում (այդ թվում՝ մանկական), թանգարաններում, կինոթատրոններում, զբոսայգիներում, ամառային ստեղծագործական ճամբարներում, գեղագիտական կենտրոններում: Ժամանցը իրականացվում է նաև մանկական հեռուստառադիոհաղորդումների, գրականության, մամուլի ու ամսագրերի, ֆիլմերի նկարահանման, տեսալսողական արտադրանքի, ինտերնետ կայքերի, մանկական նպատակային ծրագրերի միջոցով, մասնավորապես՝ «Արտուտիկ» մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբար, դպրոցականի ֆիլհարմոնիա, մանկապատանեկան ֆիլմերի փառատոն, մանկական ներկայացումներ, մյուզիքլներ («Մաուգլի») «Մենք ենք, մեր մարզը», «Հեքիաթին հյուր» ծրագրեր, ՀՀ մարզերի երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում մայրաքաղաքի և մարզկենտրոնների թանգարաններ, պատկերասրահներ, համերգային կազմակերպություններ և այլ միջոցառումներ:

Մանկական մամուլը ներկայացնում է ընդամենը մեկ շաբաթաթերթ և երեք ամսագիր (*«Կանչ», «Ծիծեռնակ», «Հայ ասպետ»*), որոնք լույս են տեսնում սահմանափակ տպաքանակով:

2) Հիմնական խնդիրները

Բացակայում են մանուկների և պատանիների ժամանցային բազմագործառույթ կենտրոնները: Հայաստանում չկա մանկական կինոթատրոն, մանկական հեռուստաալիք, տարեկան նկարահանվում է 3-5 անիմացիոն ֆիլմ: Հեռուստաընկերությունների գործունեությունը հիմնականում ունի կոմերցիոն բնույթ, եթերը քիչ է տրամադրվում մանկական հաղորդումներին, մատչելի չէ գրախանութներում վաճառվող մանկական գրականությունը:

Համայնքային մանկական գրադարաններում լուրջ խնդիրներ են գրքային ֆոնդի համալրումը, նյութատեխնիկական միջոցներով հագեցվածությունը (*ժամանակակից տեխնիկական միջոցներ՝ համակարգիչներ, տեսալսողական տեխնիկա և այլն*) և շենքային պայմանների բարելավումը:

Զբոսայգիներում, բակային ճամբարներում երեխաների բազմաբովանդակ հանգստի կազմակերպման համար պայմանների ստեղծումը:

3) Առաջարկվող գործողությունները

ա. մարզային մանկապատանեկան կենտրոնների հիմնում.

բ. մանկական թատրոնների ստեղծում.

գ. «Միջհամայնքային մշակութային մանկական ցուցահանդեսի (Արտ-Էքսպո) և մրցույթ-փառատոնի» իրականացում.

դ. ՀՀ մարզերում Դպրոցականի ֆիլհարմոնիայի գործունեության ընդլայնում և մասնաճյուղերի հիմնում.

ե. «Արտուտիկ» մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբարի կազմակերպման շարունակականության ապահովում.

զ. «ԿԻՆՈՄԱՆ» կրթամշակութային կենտրոնի և մանկապատանեկան կինոստուդիայի պիլոտային ծրագրի իրականացում .

է. մանկապատանեկան թատրոն-ստուդիայի ստեղծում.

ը. ուսումնադաստիարակչական հեռուստառադիոծրագրերի մշակում և իրականացում.

թ. մանկապատանեկան կինոֆիլմերի և տեսաֆիլմերի ստեղծում.

ժ. մանկական գիտաճանաչողական, ուսումնական, արվեստի և մշակույթի վերաբերյալ տեսալսողական արտադրանքի ստեղծում:

VII. ՇՆՈՐՀԱԼԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ

16. Շնորհալի երեխաների բացահայտման և հետագա ուսուցման գործընթացում աջակցության ցուցաբերման նպատակով իրականացվում է ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր:

1) Առկա իրավիճակը

2008 թ. ՀՀ մշակույթի նախարարությունում ստեղծվեց ՀՀ և ԼՂՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկը, որի հիմնական նպատակն է ամփոփ տեղեկատվություն ունենալ շնորհալի երեխաների վերաբերյալ, մշակել և իրականացնել նրանց ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր, ցուցաբերել աջակցություն հետագա ուսման գործում: 2008-2011 թթ. ՀՀ մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ բանկում ընդգրկված **246** շնորհալի երեխաներ և պատանիներ պարբերաբար մասնակցել են միջազգային և հանրապետական մրցույթներին ու փառատոներին, ինչպես նաև 2010-2011 թթ. 649 երեխաների մասնակցությամբ ՀՀ մարզերում կազմակերպվել են համատեղ համերգ-ստուգատեսներ: 2011 թ. ՀՀ և ԼՂՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկում ընդգրկված են ***307 շնորհալի երեխաներ:***

Ստորև ներկայացվում է շնորհալի երեխաների տեղեկատվական բանկի ցուցանիշները ըստ մարզերի.



2) Հիմնական խնդիրները

Ցուցաբերել աջակցություն շնորհալի և տաղանդավոր երեխաների բացահայտման, ինքնադրսևորման, շարունակական ուսուցման կազմակերպման գործում:

3) Առաջարկվող գործողությունները

ՀՀ և ԼՂՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկի համալրման շարունակականության ապահովում:

Մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, համերգների, «վարպետ-դասարանների» և այլ միջոցառումների կազմակերպման շարունակականության ապահովում:

VIII. ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ, ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

17. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, առանց ծնողական խնամքի մնացած, սոցիալապես անապահով և իրավախախտում կատարած երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման նպատակն է մշակութային կյանքին մասնակցության և համապատասխան մշակութային կրթություն ստանալու պայմանների ապահովումը:

1) Առկա իրավիճակը

Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, առանց ծնողական խնամքի մնացած, սոցիալապես անապահով, իրավախախտում կատարած երեխաների համար ՀՀ-ում գործում են մանկատներ, գիշերօթիկ դպրոցներ և հատուկ մանկական այլ հաստատություններ:

Հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած, սոցիալապես անապահով և իրավախախտում կատարած երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման ուղղությամբ **«Կրթություն երեխաների հատուկ խմբերի համար»** ծրագրով նախատեսված է սոցիալապես անապահով ընտանիքների և իրավախախտում կատարած երեխաների առավելագույն ներգրավումը ստեղծագործական, կրթական համակարգ:

ա. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար գեղագիտական դաստիարակության աշխատանքերը իրականացվել են **«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն»** ՊՈԱԿ-ի կողմից: Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնը հիմնվել է 1991 թ.՝ գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում մշակութային կրթական գործունեություն իրականացնելու նպատակով: Կենտրոնը հանրապետության այն եզակի արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններից է, որը գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար իրականացնում է արվեստների ուսուցում և արտադպրոցական դաստիարակություն: Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնն իր գործունեությունը իրականացնում է **Երևանի 3** գիշերօթիկ հատուկ դպրոցներում, **2** մանկատներում և ունի մասնաճյուղեր **Վանաձորում, Գյումրիում, Ստեփանավանում, Սպիտակում և Գավառում:** Ներկայումս կենտրոնն ունի ***52*** խումբ**,** ուր ընդգրկված են ***614*** սաներ և դասավանդում է ***56*** մանկավարժ: Կենտրոնում ուսուցումը իրականացվել է հետևյալ ուսումնական բաժիններում՝ դասական նվագարաններ, երգարվեստ, պարարվեստ, թատերական արվեստ, դեկորատիվ կիրառական արվեստ, գեղանկարչություն, ձեռագործ (ասեղնագործություն, հելյունագործություն), գորգագործություն:

բ. Իրավախախտում կատարած երեխաների համար գեղագիտական դաստիարակության աշխատանքերն իրականացվել են ***«Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն»*** ՊՈԱԿի կողմից: Կենտրոնը հիմնվել է 2007 թ., որն իրականացնում է մշակութային մասնագիտությունների ուսուցում իրավախախտում կատարած անչափահասների համար հատուկ հաստատություններում (Աբովյանի անչափահասների քրեակատարողական հիմնարկ) և դրանցից դուրս, ինչպես

նաև արտադպրոցական դաստիարակության կազմակերպում ու գեղագիտական կրթական ծրագրերի իրականացում: Կենտրոնի գործունեության արդյունքում ապահովվում է մշակութային կյանքին մասնակցության և համապատասխան մշակութային կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը: Կենտրոնի նպատակն է արվեստների ուսուցման միջոցով բացահայտել, խրախուսել և աջակցել ստեղծագործական գործունեությունը, մասնագիտական ուսուցման ճանապարհով ապահովել հասարակությանը ինտեգրումը, կանխարգելել հետագա իրավախախտումների հնարավորությունը, մշակութային ծրագրերի իրականացմամբ վերականգնել սոցիալ-հոգեբանական վիճակը, մասնագիտական կրթության բնագավառում ստեղծել հնարավորություն ուսումը շարունակելու համար:

Ներկայումս կենտրոնը իր գործունեությունը իրականացվում է «Աբովյան» իրավախախտում կատարած անչափահասների քրեակատարողական հիմնարկում: Ուսուցման խմբերում ներկայումս ընդգրկված են շուրջ **100** անչափահասներ, որոնց դասավանդում են **9** մանկավարժ: Դասավանդվում են բրուտագործություն, խեցեգործություն, կերպարվեստ, գծանկարչություն փայտի գեղարվեստական մշակում: Գործում են կերպարվեստի ստուդիան, թատերական խումբը, հայ ավանդական երգի ու պարի համույթը, համակարգչային ուսուցման խումբը: 2012 թ. կենտրոնը գործում է ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությամբ:

գ. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների գեղագիտական դաստիարակության մասնակցության հնարավորությունները սահմանափակ են, քանի որ ոչ բոլոր երեխաներն են ընդգրկված գեղարվեստական կրթական և գեղագիտական դաստիարակության համակարգերում:

Մշակութային կրթության բնագավառում ստեղծվել է ՀՀ և ԼՂՀ ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող շնորհալի երեխաների և պատանիների տեղեկատվական բանկ: Բանկում ընդգրկված **40** երեխաների համար պարբերաբար կազմակերպվում են ճանաչողական այցեր Երևան:

2) Հիմնական խնդիրները

Այսօր մշակութային կյանքին մասնակցելու հնարավորությունները հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների, ինչպես նաև իրավախախտում կատարած անչափահասների համար սահմանափակ են: Ներկայում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել այս երեխաների գեղարվեստական կրթությանը և գեղագիտական դաստիարակությանը, ինչը կօգնի նրանց ինտեգրվել հասարակությանը, ձեռք բերել մասնագիտություն և ինքնադրսևորվել կյանքում:

Նպատակային ծրագրերի իրականացմամբ՝

ա. հաշմանդամ երեխաների ինտեգրում մշակութային կյանքին.

բ. սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ընդգրկում մշակութային կյանքին (մշակութային կրթություն, ժամանց, հանգիստ).

գ. ծնողազուրկ երեխաների կրթության, հանգիստի և բազմաբովանդակ ժամանցի կազմակերպում.

դ. Իրավախախտում կատարած անչափահասներին ներգրավում մշակութային կյանքին:

3) Առաջարկվող գործողությունները

Հաշմանդամ երեխաների մշակութային կյանքին ինտեգրման ծրագրի մշակում.

Մանկատների ու գիշերօթիկ դպրոցների գեղարվեստական կրթություն և գեղագիտական դաստիարակություն իրականացնող խմբերում ներառված երեխաների համար մեթոդական և նյութատեխնիկական աջակցության ցուցաբերում:

Պետական աջակցություն՝ սոցիալապես անապահով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ասպարեզում:

Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, մանկատների, գիշերօթիկ դպրոցների երեխաների հանգիստը և բազմաբովանդակ ժամանցը անցկացնելու նպատակով մշակութային միջոցառումների իրականացում, այդ թվում՝ գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում, երեխաների ընդգրկում մանկապատանեկան մշակութային հանրապետական համերգներում, ցուցահանդեսներում և այլ միջոցառումներում:

IX. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նախատեսված խնդիրների կենսագործումն ու լուծումները նախատեսվում են մշակույթի և կրթության լիազորված պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տարեկան, միջնաժամկետ ծախսային, ինչպես նաև նպատակային ծրագրերով, մշակույթի և կրթության բոլոր տեսակի ու տիպերի պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների զարգացման ծրագրերով, որոնց ապահովման ֆինանսական աղբյուրներն են ՀՀ պետական բյուջեն, համայնքային բյուջեները, գեղարվեստական կրթության վճարովի ուսուցման եկամուտները, վճարովի ծառայությունները և օրենսդրորեն չարգելված այլ աղբյուրները:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թ.
նոյեմբերի 15-ի նիստի N 46
արձանագրային որոշման

Ց Ա Ն Կ

«ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ 2013-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

	Ծրագրային ուղղությունը	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարման ժամկետը	Կատարողը
1.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**					
	1.1. Նախադպրոցական հաստատություններ	1) Տարիքային տարբեր խմբերի համար երգի, պարի, նկարչության ուսումնամեթոդական ժամանակակից ձեռնարկների մշակում և հրատարակում	Նախադպրոցական հաստատություններում գեղագիտական դաստիարակության դասավանդման գործընթացի բարելավում	ՀՀ պետական բյուջե	2013 թ. ընթացքում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն
	1.2. Հանրակրթական ուսումնական հաստատություններ	1) Հանրակրթական դպրոցում ֆակուլտատիվ առարկաների՝ «Մշակույթի պատմություն», «Բարոյագիտություն», «Բանահյուսություն», «Գեղագիտություն», «Հնագիտություն»,	Մշակույթի և արվեստի պատմության իրազեկության ձևավորում, տարբեր դարաշրջանների ժողովուրդների մշակույթի հետ ծանոթացում	ՀՀ պետական բյուջե	2014 թ. ընթացքում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն

		«Ազգագրություն» առարկաների առարկայական ծրագրերի մշակում, հաստատում և ներդնում				
		2) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի արվեստի ենթահոսքի ուսումնական պլանում «Համաշխարհային մշակույթի պատմություն» առարկայի ընդգրկում	Համաշխարհային մշակույթի և արվեստի պատմության իրազեկության ձևավորում	ՀՀ պետական բյուջե	2014 թ. ընթացքում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն
		3) «Համաշխարհային մշակույթի պատմություն» առարկայի գործնական դասընթացների իրականացում	Տեսական դասընթացների ընթացքում ստացված գիտելիքների ամրապնդում գործնական աշխատանքների միջոցով	ՀՀ պետական բյուջե	2014 թ. ընթացքում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն
		4) Հանրակրթական դպրոցի դասավանդվող առարկաների շարքում «Ազգային երգ ու պար» առարկայի ներդնում	Հայրենասիրական ոգու և գիտակցության բարձրացում, ազգային երգարվեստի և պարարվեստի ավանդույթների պահպանում ու զարգացման հիմքերի ապահովում	ՀՀ պետական բյուջե	2013 թ. ընթացքում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն
		5) «Դպրոցականի գրադարան» խորագրով շարքի մեկնարկ (պետական պատվերի շրջանակներում դպրոցական ծրագրում ընդգրկված հայ դասականների ստեղծագործությունների հրատարակում)	Դպրոցականներին հայ դասականների ստեղծագործությունն-ներին հաղորդակցում	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ	ՀՀ մշակույթի նախարարություն

2	**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**					
	2.1. Մասնագիտական գեղարվեստական կրթական հաստատություններ	1) «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների պետական ծրագրի» կառավարման նպատակով միջգերատեսչական խորհրդի ստեղծում	Մշակույթի ու կրթության լիազորված պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությամբ ծրագրի արդյունավետ իրականացման ապահովում	Ֆինանսավորում չի պահանջում	2013թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ
		2) «ՀՀ մշակույթի նախարարության համակարգում «**Մշակույթի Ազգային ինստիտուտի»** ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում	Մշակույթի Ազգային ինստիտուտի գործնության արդյունքում մշակույթի ոլորտում կապահովվի. ա. մասնագետների վերապատրաստումը և վերավորակավուրումը. բ. մշակութաբանական, գիտահետազոտական աշխատանքների և ուսումնասիրությունների իրականացումը, գ. մանկավարժների որակավորման չափորոշիչների մշակումը, դ. մանկավարժների ատեստացիայի իրականացումը ե. ուսուցման	Ֆինանսավորում չի պահանջում	2013 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ մշակույթի նախարարություն

			մեթոդիկաների մշակումը, զ. համապատասխան գիտական և մեթոդական գրականության հրատարակումը			
		3) «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում	Օրենքի նախագծի ընդունմամբ ՀՀ-ում կհստակեցվի երաժշտական, արվեստի և գեղարվեստի, պարարվեստի դպրոցների կրթական կարգավիճակը և տեղը մասնագիտական կրթության մակարդակներում	Ֆինանսավո-րում չի պահանջում	2013 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն
		4) Մասնագիտական կրթական հաստատությունների մասնագետների թվաքանակի օպտիմալացում, մասնագիտական կրթության կառուցվածքային վերակազմակերպում	Գեղարվեստական կրթության համակարգի մանկավարժների սոցիալական վիճակի բարելավում, մասնագիտական կրթական հաստատություններում դասավանդման որակի ապահովում	Ֆինանսավո-րում չի պահանջում	2013 թ. 3-րդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն
		5) «ՀՀ երաժշտական, արվեստի և գեղարվեստի հենակետային դպրոցների նյութատեխնիկական և մասնագիտական բազայի բարելավում» ծրագրի նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	ՀՀ երաժշտական, արվեստի և գեղարվեստի հենակետային դպրոցների բնականոն գործունեության ապահովում	ՀՀ պետական բյուջե	2013 թ. 3-րդ եռամսյակ	ՀՀ մշակույթի նախարարություն
		6) Երաժշտական, արվեստի և	ՀՀ երաժշտական,	ՀՀ պետական	2013-2015	ՀՀ մշակույթի

		գեղարվեստի դպրոցների մասնագիտացված ուսուցման համար ուսումնական նոր պլանների, առարկայական ծրագրերի, մեթոդական ձեռնարկների, դասագրքերի, մշակում և հրատարակման աշխատանքների շարունակում	արվեստի և գեղարվեստի դպրոցներում անհրաժեշտ մասնագիտական գրականության ապահովում	բյուջե	թթ.	նախարարություն
		7) Մշակութային կրթական հաստատությունների գործունեության ուսումնասիրում և մոնիթորինգի իրականացում	Հասարակության գեղարվեստական կրթության և մշակույթի զարգացման իրավիճակի և շարժընթացի բացահայտման նպատակով սոցիալ-տնտեսական և սոցիոլոգիական հետազոտությունների անցկացում	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն
	2.2 Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ	1) ՀՀ Սյունիքի, ՀՀ Վայոց ձո-րի, ՀՀ Արարատի, ՀՀ Տավու-շի, ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Կոտայքի մարզերի առկա նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում արվեստի և արհեստների մասնագիտությունների ներդրում	ՀՀ մարզերի նախնական մասնագիտական ուսումնա-կան հաստատություններում արվեստի և արհեստների ուսուցման հավասարաչափ բաշխման ու մատչելիության ապահովում, ավանդական արհեստների կենսունակության ակտիվացում և շարունակականության ապահովում	ՀՀ պետական բյուջե	2014 թ. 3-րդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ
	2.3. Միջին	1) ՀՀ աշխատաշուկայի	ՀՀ միջին մասնագիտական	ՀՀ պետական	2013 թ. 4-րդ	ՀՀ կրթության և

	մասնագիտական ուսումնական հաստատություններ	պահանջարկից ելնելով՝ միջին մասնագիտական կրթության նոր մասնագիտությունների (մասնագիտացումների) պետական կրթական չափորոշիչների մշակում և սահմանված կարգով մասնագիտությունների ցանկում փոփոխության կատարում՝ ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նոր մասնագիտությունների ներդրում	ուսումնական հաստատություններում նոր մասնագիտությունների ներդրմամբ մշակույթի ոլորտում միջին մասնագիտական որոկավորում ունեցող մասնագետների պահանջարկի ապահովում	բյուջե	եռամսյակ	գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն
		2) ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նոր մասնագիտությունների ներդրում («Ռեժիսուրա» մասնագիտության «Հնչունա-յին ռեժիսուրա» և «Էստրադային ռեժիսուրա» մասնագիտացումները, «Արտմենեջմենթ», «Նվագա-րանների պատրաստում և վե-րանորոգում» մասնագիտությունները, «Ար-վեստի ստեղծագործություններ-ի վերականգնում, կոնսերվա-ցում և պահպանում» մասնա-գիտության գծով՝ մշակութա-			2014 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն

		յին արժեքների վերականգ-նողներ՝ ըստ մասնագիտա-ցումների)				
3.	**ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**					
	3.1. Մանկապատանեկան ստեղծագործական տարաբնույթ կենտրոններ	1) Տարիքային տարբեր խմբերի համար երաժշտության, երգի, պարի կերպարվեստի ուսումնամեթոդական ձեռնարկների, գրքերի մշակում և հրատարակում	Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական բյուջե	2013 թ. ընթացքում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն
		2) Մանկավարժների վերապատրաստման դասընթացների կազմակերպում	Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում դասավանդող մանկավարժների որակավորման բարձրացում	ՀՀ պետական բյուջե	2013 թ. ընթացքում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն
4.	**ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԳՍՏԻ, ԺԱՄԱՆՑԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**	1) Մարզային մանկապատանեկան կենտրոնների հիմնում	Մանուկների և պատանիների համար հայ և միջազգային գրական ժառանգությանը հաղորդակցում, գեղարվեստական մտածողություն, ճաշակի ձևավորում, հանգստի և ազատ ժամացի բազմաբովանդակ կազմակերպում	ՀՀ պետական բյուջե	2013 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ մշակույթի նախարարություն
		2) «ԿԻՆՈՄԱՆ» կրթամշակութային կենտրոնի	Մանկապատանեկան կինոյի գործունեության	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն

		և մանկապատանեկան կինոստուդիայի պիլոտային ծրագրի իրականացում	զարգացման խթանում և երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտում			
		3) Մանկապատանեկան թատրոն-ստուդիայի ստեղծում	Նոր թատերախմբերի ստեղծմամբ ու կայացմամբ մանկապատանեկան թատերական արվեստի ավանդույթների պահպանում և զարգացում	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն
		4) Մանկական (Արտ-Էքսպո) «Միջհամայնքային մշակութային 1-ին մանկական ցուցահանդեսի և մրցույթ-փառատոնի» ծրագրի իրականացում	Մանկապատանեկան կրթական հաստատությունների ձեռքբերումների նեկայացում հանրությանը, մանկական կրթական հաստատությունների գործունեության գնահատում, ինչպես նաև փորձի փոխանակում, լավագույն մշակութային գործունեությունը համար մրցանակների հանձնում	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն
		6) «Արտուտիկ» մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբարի կազմակերպում	Մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբարի կազմակերպմամբ շնորհալի երեխաների ստեղծագործական կարողությունների	ՀՀ պետական բյուջե	2014թ.	ՀՀ մշակույթի նախարարություն

			զարգացում			
		7) ՀՀ մարզերում դպրոցականի ֆիլիարմոնիայի ներկայացուցչությունների հիմնում	Ճանաչողական, բացատրական թեմատիկ միջոցառումների միջոցով նպաստում երեխաների գեղագիտական դաստիարակությանն ու վաղվա բարձրաճաշակ ու գրագետ ունկնդրի ձևավորմանը	ՀՀ պետական բյուջե	2013 թ. ընթացքում	ՀՀ մշակույթի նախարարություն
		8) Պետական պատվերով կինոթատրոններում մանկական ֆիլմերի նպատակային ցուցադրում	Մանկական ֆիլմերի դիտման մատչելիության ապահովում, ազատ ժամանցի կազմակերպում	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն
		9) Ուսումնադաստիարակչա-կան ռադիոհեռուստա-ծրագրերի ստեղծում երեխաների համար	Ուսումնադաստիարակչակա ն ռադիո-հեռուստածրագրերի ստեղծումը և հառարձարկումը կնպաստի ազատ ժամանցի կազմակերպմանը, մշակութային կյանքին հաղորդակցմանը, արվեստի ուղղությունների և հայտնի արվեստագետների ստեղծագործական կյանքին ծանոթացմանը	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն
		10) Մանկական կինոֆիլմերի և տեսաֆիլմերի նկարահանում	Մանկական կինոֆիլմերի և տեսաֆիլմերի նկարահանումները կնպաստեն մանկական աշխարահայցքի,	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն

			գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ազատ ժամանցի կազմակերպմանը			
		11) Մանկական գիտաճանաչողական, ուսումնական, արվեստի և մշակույթի վերաբերյալ տեսալսողական ֆիլմերի արտադրություն	Ֆիլմերի արտադրությունը կնպաստի մշակութային ստեղծագործությունների ճանաչողությանը և հաղորդակցմանը, ազատ ժամանցի բովանդակալի կազմակերպմանը	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ	ՀՀ մշակույթի նախարարություն
5.	**ՇՆՈՐՀԱԼԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ**	1) ՀՀ և ԼՂՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկի շարունակական համալրում	Տեղեկատվական բանկի շարունակական համալրումը ուղղված է շարունակական ուսուցման կազմակերպման գործում (կրթաթոշակ, մասնագիտական գույքի ձեռքբերում) առավել հասցեական և արդյունավետ դարձնել ցուցաբերվող աջակցությունը	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն
		2) Մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, համերգների, «վարպետ-դասարանների» և այլ միջոցառումների կազմակերպման շարուակականության ապահովում	Շնորհալի երեխաների հայտնաբերում և ստեղծագործական կարողությունների զարգացմամբ ու շարունակական ուսուցմամբ մշակույթի ոլորտը նոր ստեղծագործական մասնագետներով համալրում	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ	ՀՀ մշակույթի նախարարություն

		3) Աջակցության ցուցաբերում շնորհալի և տաղանդավոր երեխաների բացահայտման, ինքնադրսևորման, շարունակական ուսուցման կազմակերպման գործում	Շնորհալի երեխաների հայտնաբերում և ստեղծագործական կարողությունների զարգացմամբ ու շարունակական ուսուցմամբ մշակույթի ոլորտը նոր ստեղծագործական մասնագետներով համալրում	ՀՀ պետական բյուջե	2014 -2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն
6	**ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ, ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**	1) Պետական աջակցության շարունակության ապահովում սոցիալապես անապահով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ասպարեզում	Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիրակության իրականացման արդյունքում մասնա-գիտությունների ձեռքբերում, ստեղծագործական հմտությունների զարգացում	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն
		2) Երեխաների հանգիստը և ժամանցը բազմաբովանդակ անցկացնելու նպատակով մշակութային միջոցառումների իրականացում մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում	Մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում մշակութային միջոցառումների և ազատ ժամանցի կազմակերպումը կապահովի երեխաների հետաքրքրությունների լայն շրջանակ, պայմաններ կստեղծի նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն

			զարգացման համար			
		3) Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, մանկատների, գիշերօթիկ դպրոցների երեխաների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում, մանկապատանեկան մշակութային հանրապետական միջոցառումներում, համերգներում, ցուցահանդեսներում և այլ միջոցառումներում երեխաների ընդգրկում	Գիտաճանաչողական ուղևորությունների և մշակութային հանրապետական միջոցառումներում, համերգներում, ցուցահանդեսներում և այլ միջոցառումներում երեխաների ընդգրկումը կնպաստի նրանց ինտեգրմանը մշակութային կյանքին, ճանաչել հայ մշակույթը և պատմությունը, դրսևորել իրենց կարողությունները և ունակությունները, ձեռք բերել փորձառություն	ՀՀ պետական բյուջե	2013-2015 թթ.	ՀՀ մշակույթի նախարարություն